

ԿՑԱՆՔԻ ԵՎ ՄԱՅԿԱՆ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԻՍԱԴԱԿՅԱՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄ

3. Գ. ՂԱԶՈՅԱՆ

Կյանքի և մահվան փոխհարաբերության հարցը Իսահակյան ստեղծագործողի և մտածողի ուշադրության կենտրոնում է եղել ստեղծագործական առաջին քայլերից սկսած մինչև խոր ծերություն:

Մահվան գաղափարը մարդկային գործունեության շատ կողմերի վրա իր կնիքը թողնում է ինչպես առտնին կյանքում, այնպես էլ ստեղծագործական և գործունեության այլ բնագավառներում: Հատկապես Իսահակյանի Հիշատակարանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս պատանի հասակից բանաստեղծը անտարբեր չի եղել մահամեռձ մարդկանց նկատմամբ, դիտել, ուսումնասիրել է վերջիններիս պահվածքն ու վարքագիծը: Միաժամանակ ուշադրություն է դարձրել հուղարկավորության ժամանակ մարդկանց պահվածքին, մտածելակերպին: Իսահակյանի մտորումները կյանքի և մահվան մասին արդյունք են նրա՝ շրջապատի նկատմամբ խիստ զգայուն և ուշադիր լինելու, անմիջապես ազդվելու և տպավորվելու: Թե՛ համաշխարհային գրականությունը և թե՛ փիլիսոփայությունը ուսումնասիրելիս, ինչպես նաև առօրեական դեպքերը դիտելիս Իսահակյանի մեջ ձևավորվում է այն ըմբռնումը, որ մարդն ըստ էության եզակի էակ է, որը գիտակցում է իր մահկանացու լինելը և այն դարձնում մտորումների առարկա:

Իսահակյանն այն կարծիքին է, որ մարդկության համար մտածողության ոլորտում ամենածանր բեռը, որը հյուծում ու կործանում է նրան, կյանքի ու մահվան հարցերի քննությունն է, ուստի գոյության ու չգոյության հիմնավորումը մարդկային տառապանքներից գերազույցն է ու հավերժ քննելի. «Ինչի՞ համար ենք կրում այս ծանր բեռը. այս կործանող, հյուծող մտածումը, բանականությունը՝ փորել, քննել իրերի էությունը գտնելու համար, նպատակ գտնելու կյանքի և մահվան մեջ...»¹:

Կյանքի ու մահվան մասին խորհրդածելիս համանման մտքեր է արտահայտել նաև Տոլստոյը. «Մոսկվայի էր իմ կացությունը: Գիտեի, որ բանական գիտության ճանապարհի վրա ես ոչինչ չեմ գտնի, բացի կյանքի ժխտումից, իսկ այնտեղ՝ դավանանքի մեջ՝ ոչինչ բացի բանականության ժխտումից, որը առավել ևս անհնարին է, քան կյանքի ժխտումը»²:

Մահվան թեման Իսահակյանի ստեղծագործություններում կարևոր տեղ է գրավում: 1950-ականներին գրականագետներից ոմանք միակողմանի են մտնեցել այդ խնդրին: Ահա մեկ օրինակ. «Մահ ու մահերգի թեմաները շոշափելիս մահվանից երկնչող պոետի ստեղծագործական դիմանկարը գծագրվում է սև գույներով»³: Անընդունելի է համարվել հատկապես այն, որ բանաստեղծը երգում է «անհատի, հատկապես և իր՝ որպես մահկանացուի ֆիզիկական ոչնչացման սարսափը»⁴: Մի՞նչդեռ իրականում մահվան թեման Իսահակյանը քննել է առավել խորությամբ, առավելապես փիլիսոփայական տեսանկյունից, գոյաբանականի և իմացաբանականի շրջանակներում: Կյանքի ու մահվան շուրջ մտորումները վերածվել են գոյաբանական հարցի և ստացել գիտական ճանաչողական նշանակություն: Կյանքի ու մահվան թեման մտորություն չէ ոչ գրականության և ոչ էլ փիլիսոփայության համար: Խնդիրն այն է, թե տարբեր մտածողներ ինչ պատկերացումներ ու վերաբերմունք են դրսևորել պատմական այս կամ այն ժամանակահատվածում Մահ երևույթի նկատմամբ: Նախնադարյան պարզունակ հասարակության

¹ Ավ. Իսահակյան, Աֆորիզմներ, Եր., 2001, էջ 341:

² Լ. Ն. Տոլստոյ, Խոստովանություն, Թիֆլիս, 1911, էջ 133:

³ Հ. Ղանալանյան, Ավետիք Իսահակյան, Եր., 1955, էջ 67:

⁴ Նույն տեղում, էջ 67:

մեջ մահը չի դիտվել որպես բնական երևույթ: Մարդու՝ մահականացու լինելու միտքը իր բնույթով նախնադարյան կրոնական կյանքին խորապես օտար էր: Սա թույլ է տալիս հրատակորեն տարբերակելու անմահության առասպելաբանական հավատը և անմահությունը ապացուցելու հետագա փիլիսոփայական փորձերը, ինչպես օրինակ՝ Պլատոնի «Ֆեդոնոս», որտեղ Սոկրատի օրինակով նշվում է. «Ու հիմա պիտի պարզեմ ձեզի, իմ դատաւորներուս, թե ինչպէս կը հավատամ որ իր կեանքը իմաստասիրութեան ուսման նուիրած մարդ մը, պէտք է լիովին վստահ ըլլայ մահուան մօտենալուն, եւ ունենայ անխախտ յոյս, թե ինք հանդերձեալին մէջ պիտի գտնե շատ մեծ երջանկութիւն մը»⁵: Մահվան ու անմահության հարցը անկասկած առնչվում է հոգու՝ որպես ինքնուրույն գոյի մասին պատկերացումների հետ: Համաշխարհային կրոնական ուսմունքները ուսումնասիրած և Պլատոնի՝ հոգիների տեսությանը ծանոթ իսահակյանը վիճարկում է. «...Մի օղակ, մի քանի տարով պիտի մարմին առնի իրերի վրա, հետո երթա և հավիտենական ապրի... ինչո՞ւ համար, թող միշտ մնար կամ վերևը, կամ ներքևը: Մարմինը ի՞նչ մեղավոր է, որ պիտի տանջվի, չարչարվի, մեռնի, ...դատարկ բաներ են, հոգի չկա»⁶: Իսահակյանը հոգու գոյության խընդիրը բանական, տրամաբանական վերլուծության է ենթարկում՝ փորձելով պարզել նրա ինքնուրույն գոյության վայրի. տեղի, անելիքի, նպատակի հարցերը. «Մեռնելուց հետո ինչպէ՞ս պիտի լինի հոգու անմահությունը: Էս մեծ, անծայր աշխարհում, ուր վխտում են անթիվ աստղեր, արևներ, էս իրարանցման մեջ որտե՞ղ պիտի հոգին իր գլուխը պահի...»⁷: Այսինքն՝ անմահությունը հոգու ինքնուրույն գոյության տեսքով իսահակյանը չի ընդունում: Անմահությունը մահվան հանդեպ վախի՝ մարդու կողմից ստեղծված հասկացություն է, իդեալ, ասել է՝ նաև փրկության միջոց. «Ես սուկացի մահից և ստեղծեցի այն, ինչ որ անմահ է...»⁸:

Ընդհանուր առմամբ, ելնելով իրենց բնավորությունից, խառնվածքից, մասնագիտությունից, հետապնդած նպատակներից, մարդիկ միևնույն երևույթի նկատմամբ դրսևորում են տարբեր վերաբերմունք: Հ. Միրզոյանը, վերլուծելով հայ միջնադարյան փիլիսոփա Հովհաննես Մրցուզ Ջուղայեցու և հոռմեացի ականավոր հրապարակախոս ու բարոյագետ Սենեկայի միևնույն երևույթի՝ բարկության նկարագրությունը, նշում է. «Տեսնում ենք՝ ակնհայտ է նրանց ընդհանուր նմանությունը, նույնիսկ կան ընդհանուր բառեր, արտահայտություններ ու պատկերներ, բայց զգալի է հատկապես տարբերությունը: Եթե որպես դիմանկարիչ՝ Ջուղայեցին իր ուշադրությունը սևեռել է բարկացածի դիմային փոփոխությունների ու գունային խաղերի վրա, ապա Սենեկան, ընդհակառակը, հիմնականում ուշադրություն է դարձրել նրա կատարած շարժումների, արձակած ձայների, ընդհանուր տեսքի ու գործած տպավորությունների վրա՝ գրեթե ոչինչ չասելով դեմքի գունային փոփոխությունների մասին»⁹: Համանման օրինակի ենք հանդիպում իսահակյանի «Ֆաթիհ սուլթան Մեհմեդ» պատմվածքում, ուր հոչակավոր վարպետ նկարիչը ցուցադրում է մի պատառ, որի վրա նկարել էր Հովհաննես Մկրտչի կտրած գլուխը: Սուլթանը, հիացած գովելով նկարի գույները, նկատում է, որ «պարանոցի այս կտոր միսը, որ դեռ նկատվում է կտրած գլխի վրա, իրականին չի համապատասխանում»¹⁰: Իբրև ապացույց գլխատվում է մի ստրուկ, որի կյանքը սուլթանի համար արժեք չունի, իսկ մահը՝ ոչ մի ազդեցություն: Ժամանակակից հետազոտողները իրավացիորեն նկատել են, որ «միևնույն վիճակը տարբեր փիլիսոփաներ կարող են տարբեր ձևերով ու գույներով ներկայացնել՝ մեկը զգացմունքային, մյուսը՝ բանական, մեկը՝ հոռետեսական, մյուսը՝ լավատեսական, մեկը՝ տագնապած, մյուսը՝ անխոռվ ու անտարբեր ձևերով»¹¹:

⁵ Պլատոն, Փեդոն կամ Հոգին անմահ, Պոսթոն, 1951, էջ 39:
⁶ Գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի ֆոնդ (հետազայում՝ ԳԱԹ ԱԻԾ), № 340-II-բ:
⁷ ԳԱԹ ԱԻԾ, № 296-II, էջ 4:
⁸ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, էջ 236:
⁹ Հ. Ղ. Միրզոյան, Հովհաննես Մրցուզ Ջուղայեցի, Եր., 2001, էջ 215:
¹⁰ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու վեց հատորով (այսուհետ՝ ԵԺ-6), հ. 3, Եր., 1975, էջ 339:
¹¹ Ս. Զաքարյան, Մարդու հիմնախարը 13-15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ, Եր., 1999, էջ 40:

Իսահակյանը նկատել է, որ ելնելով իրենց առջև դրված նպատակներից ու խնդիրներից, աշխարհընկալումից և անգամ բնավորությունից՝ մարդիկ տարբեր կերպ են ընկալում մահը, ընդ որում՝ այդ ընկալումից ձևավորվում են երկու տարբեր, հակադիր արժեքային համակարգեր: Մի բևեռում Չինգիզ խանի, Բողդիխանի կարգի անձեր են, մյուս բևեռում՝ Սաադիի և Սոկրատեսի: Առաջին երկուսը պայքարում են մահվան դեմ, ընդ որում՝ նրանց անհանգստացնում ու մտահոգում է իրենց սեփական մահը, ուստի չափանիշը անձնականն է: Աշխարհի գաղտնիքները մեկնել չկարողացող չորս հարյուր հիսուն գիտուններին ու իմաստուններին Բողդիխանը մահվան է դատապարտում. «Իուք ամենը պիտի մեռնեք, եթե չմեկնեք ինձ լլկող, չարաչար կեղեքող հարցերը»¹²:

Իսահակյանը Բողդիխանին կանգնեցնում է գոյության ու չգոյության մեծ անեղծվածի առջև: Թվում է՝ Բողդիխանը անեղծվածը լուծել է Ոգին ու Միտքը սպանելու մասին իր հրովարտակով, որովհետև «Ոգին մղում է դեպի անհուսություն, միտքը՝ դեպի մահ»¹³, մինչդեռ դա թվացյալ է, «անգոհության» մեջ ուրախ և երջանիկ ապրելու Բողդիխանի մտահղացումը՝ պատրանք: Այս ամենի համար նա փոխհատուցում է ինքնասպանությանը: Բողդիխանի օրինակը Իսահակյանի պատմվածքում կամավոր մահվան գնալու մի յուրօրինակ տարբերակ է, որը, մեր կարծիքով, արևելյան ժողովուրդների դիցաբանությանը և կրոնական ուսմունքներին ծանոթ լինելու արդյունք է: Ժամանակակից հետազոտողները նկատել են, որ տարբեր են մահվան նկատմամբ արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումները, մասնավորապես՝ «Մապոնհայում սկզբունքորեն երբեք էլ չի եղել որևէ առարկություն մահվան ազատ ընտրության հանդեպ, մի հարց, որի հետ քրիստոնյա Արևմուտքը դժվարացել է համաձայնել: ... Ինքնասպանության հանրային պարսավումն ուժեղ էր սկսած քրիստոնեական առաջին դարերից...»¹⁴: Պատահական չէ, որ արևելյան թեմաներով գրված Իսահակյանի գործում հանդիպում ենք «ինքնասպան իրոք մահից խուսափելու համար է դիմում մահին»¹⁵ հետաքրքիր մեկնաբանությանը: Մահամերձ Չինգիզ խանը մոլորված է, շփոթված, զգում է, որ անգոր է պայքարելու մահվան դեմ և հրամայում է՝ «պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը ...»¹⁶: Չկա գութ, ցավ ուրիշի՝ ապրողների հանդեպ: Իսահակյանը Չինգիզ խանին կյանքի մայրամուտին մահվան դեմ կանգնեցրել է առանց զենք ու զորքի, մեն-մենակ. մարդ, որն ունեցել է աշխարհակալ ձգտումներ, կազմակերպել կոտորածներ, ավեր, խլել հազարավոր կյանքեր: Սրանով է նշանավորել իր կյանքը խանը, բայց կյանքի ու մահվան հավերժական ճանապարհի իր ժամանակահատվածի վերջում դա այլևս նրան չի բավարարում, հենց սրանով էլ պայմանավորվում է մահվան նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքը: Մի այլ արժեքային համակարգի դեպքում՝ մասնավորապես Սաադիի աշխարհընկալման պարագայում, հրաշք է աշխարհը ու գեղեցիկ հեքիաթ, անհուն, զարմանալի: Աշխարհը վայելք է առանց շահի ու կոտորածի, այն հոգևոր վայելք է: Ոչ թե չարությունը, այլ սերն է դառնում աշխարհի ու մարդու նկատմամբ գլխավոր չափանիշը: Սաադին ցավում կամ առնվազն ափսոսում է՝ «Ավա՛ղ, անցավ հարյուր տարիս մի գիշերվա երազի պես»¹⁷: Նա զարմացած է ողջ կյանքում, ուստի գեղեցիկ է այդ զարմանքը նրա կյանքի ցանկացած պահին ու հատվածում, այդ թվում վերջին՝ հարյուրերորդ գարնանը: Նման աշխարհընկալման ու աշխարհայացքի արդյունքն են վերջին խոսքերը. «Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով...»¹⁸: Ընթերցողի կարծիքին ենք թողնում կյանքի և մահվան վերաբերյալ պատկերացումների ու վերաբերմունքի փոփոխությունը Իսահակյանի ստեղծագործություններում, քանզի վերը նշված մտքերը շարադրելուց ուղիղ 30 տարի առաջ՝ 1893 թվականին, հիշատակարանային վաղ գրառումներում կարդում ենք. «Ծնվում ես ակամա, ապրում ես անըն-

¹² Նույն տեղում, էջ 125:

¹³ Նույն տեղում, էջ 127:

¹⁴ Բ. Ժ. Գիշյան, Կամավոր մահ. ճապոնացիների ազգային ինքնության քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 2003, № 2, էջ 130:

¹⁵ ԵԺ-6, Բ. 3, էջ 151:

¹⁶ Նույն տեղում, էջ 134:

¹⁷ Նույն տեղում, էջ 73:

¹⁸ Նույն տեղում, 1975, էջ 76:

պատակ, մեռնում ես ակամա»¹⁹: Մահվանից առաջ հոգեպես ընկճված ու սարսափած մարդու վիճակ է նա նկարագրում «Մի շաբաթ մահապարտի հետ» պատմվածքում. «Երբեք սարսափը այդպես մարմնացած չէի տեսել: Այդ աչքերը նայում էին միայն ինձ, միայն ինձից փրկություն հուսալով, մի անհույս հույսով նայում էին ինձ»²⁰: Իսահակյանը նկատել, ուսումնասիրել, նկարագրել և գեղարվեստորեն վերարտադրել է մահվանից առաջ ենթադրվող բոլոր հնարավոր դեպքերը՝ ընկճվածություն, սարսափ, մտատանջություն, մոռացվածություն, ափսոսանք, սառնասրտություն, անգամ ժպիտ, զարմանք, զղջում, վերջին վայելքի բերկրանք, այդ վայելքից զրկվողի կատաղություն, մարդու և աշխարհի հանդեպ չարություն կամ էլ նրանցից բաժանվելու կարոտ և անգամ մահվան հանդեպ անտարբերություն: Այնուհանդերձ, թվարկվածները սովորական են, առօրեական, ոչ հազվադեպ: Մինչևեռ մահվանից առաջ ուրիշ է Սոկրատեսի վարքագիծը: Մտորելով Սոկրատեսի՝ կյանքի ու մահվան հանդեպ ցուցաբերած վերաբերմունքի մասին, բանաստեղծը նկատում է, որ փիլիսոփան վերջ թվարկված իրավիճակներից և ոչ մեկը չի ընտրում: Մահվանից առաջ նա հոգեպես հանգիստ է, որը հասնում է վեհության աստիճանի: Նախ՝ Սոկրատեսը կանգնած է կյանքի ու մահվան միջև անվրդով: Իսահակյանն արժևորում է ոչ միայն այն, որ իբրև ճշմարիտ արվեստագետ՝ նա մնում է իր կոչմանը հավատարիմ, իր ընտրած ուղու ճշմարտությանը համոզված, այլև կարևորում է այն, որ կյանքի վերջին վայրկյանին անգամ փիլիսոփան ձգտում է հազեցնել իմացության տենչը: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ հոգեկան ծարավ: Իսահակյանը միանգամայն համամիտ է Սոկրատեսի հետ, որ մահից վայրկյան առաջ չիմացածը պիտի սովորել, ձգտել կատարելագործել միտքը. «Ամեն ինչ գիտենալ և մեռնել, հոգ չէ: Ամենագիտությամբ, անմնացորդ կերպով գիտենալ, այլև բան չի մնում աշխարհում: Մեռնել հանգիստ մտքով, գոհ, կատարյալ»²¹: Թե ինչպիսի համոզվունքով է Սոկրատեսը նախապատրաստվում մահվան, նկարագրված է Պլատոնի աշխատության մեջ. «... եթե ես չկարծեի որ պիտի գտնեմ միև աշխարհին մեջ բարի եւ իմաստուն աստուածներ ու մարդեր՝ լուսազոյն քան անոնք որ հոս են, սխալ պիտի ընեմ մեռնելուս համար չցաւելով: Բայց քաջ գիտցէք որ յոյս ունիմ վերստին միանալ շուտով արդար մարդերուն, առանց սակայն այդ կարենալ բոլորովին հաստատելու»²²:

«Հիշատակարանի» վաղ գրառումներում կյանքի և մահվան շուրջ խորհրդածելիս Իսահակյանը նշում է. «Մեռնել՝ նշանակում է ազատվել, կատարել մի օրենք, մի փոխանակություն՝ կենդանությունից – մեռելություն. «մեռալ, պրծալ» ժողովրդյան այս հայացքի մեջ կա խորը փիլիսոփայություն»²³: Ո՞րն էր այդ փիլիսոփայությունն ըստ Իսահակյանի: Նման մտածելակերպը գալիս է դեռևս միջնադարից, քրիստոնեության ազդեցությունից, որ այս աշխարհը վերջին հաշվով մեղքերի աշխարհ է, և կյանքից հեռանալով՝ վերջ է դրվում այդ տանջանքներից: Միջնադարյան հայ փիլիսոփայական միտքը ուսումնասիրող հեղինակները իրավացիորեն նկատել են, որ «Ժամանակաշրջանի հայ մտածողները հանդերձյալ կյանքը պատկերացնում են իբրև երանելի մի կեցություն, որտեղ մեկընդմիջտ լուծված են այսկողմնային աշխարհում մարդուն մտատանջող բոլոր հարցերը»²⁴: Թեև միջնադարյան աստվածաբան մտածողները մեծ տեսակետ ունեն, սակայն մենք համամիտ ենք այն կարծիքի հետ, որ «չնայած քրիստոնեությունը խոստանում է հանդերձյալ կյանք, հարություն, նոր մարմնական գոյություն, բայց դա անբավարար է: Ժողովրդական փիլիսոփայությունը մահը մեկնաբանում է որպես գոյության ավարտ և առհավետ բաժանում: Պատահական չէ, որ թաղումներն ուղեկցվում են ուժեղ լացով, վշտով, խոր տխրությամբ...»²⁵: Իսահակյանը հենց այս իմաստով էլ ժողովրդյան փիլիսոփայություն էր տեսնում:

¹⁹ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 97:

²⁰ ԵԺ-6, հ. 3, էջ 293:

²¹ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 416:

²² Պլատոն, Աշվ. աշխ., էջ 38:

²³ Նույն տեղում, էջ 56:

²⁴ Ս. Ջաքարյան, Մարդու հիմնահարցը 13-15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ, Եր., 1999, էջ 230:

²⁵ Բ. Ժ. Գիշյան, Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների համեմատության փորձ, «Հանրեր Երևանի համալսարանի», 2004, № 2, էջ 104:

կյանքի ու մահվան կոնֆլիկտը շարունակական է, և ամեն կյանքից Ֆեռացողից Ֆեռո այն փոխանցվում է ապրողներին: Այսպիսով, Իսահակյանը դնում է մեռնողի ու ապրողների փոխհարաբերության հարցը երկու առումով, առաջին՝ ո՞ւմ կարեկցել, մեռնողի՞ն, թե՞ ապրողներին: Հարցն ուշագրավ է, սակայն դրան պատասխանել թերևս կարելի է՝ կախված իրավիճակից: Օրինակ, երիտասարդ ընտանիքի ծնողներից մեկի կորստի դեպքում պետք է ցավել և կարեկցել ապրողներին, երկրորդ՝ կա Ֆեռացածների նկատմամբ հիշատակը հարգելու խնդիր, որը ուղեկցվում է ապրողներին որոշակի նեղություն կամ հոգս պատճառելով, և նա օգտագործում է Ֆեռակալ արտահայտությունը. «Մեռնում են ուրիշի համար»²⁶: Մի կողմից Իսահակյանը նկատել է և ամրագրել Ֆեռացողների՝ ապրողներին թողած հոգսի և ցավի բաժինը, մյուս կողմից էլ, որպես արևելյան տիպի մտածելակերպի Ֆեռ շփվող ու այն կրող, նա նկատել է, որ ապրողները անտարբեր չեն Ֆեռացածների նկատմամբ, որ մահացածի հանդեպ Ֆեռաքրքրությունը պահպանվում է: Միանգամայն տեղին է նկատել Բ. Գիշյանը, որ «Արևելյան քրիստոնեությունից ու միջերկրածովյան քաղաքակրթությունից եկող կյանքի ու մահվան կոնֆլիկտը և ինտենսիվ զգացումային կապերի գոյությունը հայ ընտանիքներում ստեղծում են զգացումներով ու տանջալից ապրումներով հագեցած իրավիճակներ, որոնք մոտիկ մեկի մահը դարձնում են ողբերգություն և ապրողներին ստիպում մեռածներին կապել երկրային կյանքի Ֆեռ»²⁷: Իր հարազատներից, մտերիմներից մեկի մահն, որն, ի դեպ, զոհվել էր ազգային ազատագրական պայքարի ընթացքում (իսկ վերջիններիս հանդեպ Իսահակյանը առանձնակի հարգանք ուներ), «Հիշատակարանում» գրում է. «Միսակի վիշտը շա՛տ խորն է իմ հոգում. երբեմն այդ վիշտը ինձ խենթացնում է..., այդ բոթի առաջին օրը ես այնպես էի տանջվում...»²⁸: Իսկ «Հոր անծծը» պատմվածքում ցույց է տալիս, թե ինչպես երիտասարդ որդու մահից Ֆեռո (վերջինս ինքնասպան էր եղել) ծերունի հայրը կաթվածահար է լինում և որդու թաղման յոթնօրյակին հորը թաղեցին «ամիծված, բայց անհունորեն սիրված որդու կողքին...»: Մահացածների նկատմամբ հարգանքը, հուղարկավորության ու հիշատակը վառ պահելու հարցերը ազգային արժեքների համակարգում են, ուստի արդիական են, քանի որ ներկայումս արևմտյան հասարակություններում արժեզրկվում են մեռածների մեծարումն ու հարգումը: Նախնիների, մեռածների հանդեպ հավատն անկում է ապրում, իսկ դա վերջիվերջո կարող է տանել արժեքների ձևավորման կարևոր նախահիմքերից մեկի կորստին²⁹:

Այն, որ հանգուցյալի ծանոթներն ու հարազատները տարբեր տրամադրությամբ ու տրամադրվածությամբ կարող են կատարել ժողովրդական ավանդությանն համապատասխան իրենց պարտքն ու պարտականությունները, նկարագրել է նաև Տոլստոյը. «Իվան Իլյիչի մոտ ծանոթները, այսպես կոչված՝ բարեկամները, միաժամանակ ակամա մտածում էին, որ հիմա իրենք պետք է պատշաճության խիստ տաղտկալի պարտականություններ կատարեն և զնան հոգեհանգստի ու ցավակցական այցելություն տան հանգուցյալի այրուն»³⁰:

Իսահակյանը բազմիցս ընդգծում է, որ առտնին հոգսերի ու ընթացքի մեջ դժվար է խորհել կյանքի ու մահվան խնդրի շուրջ, առավել ևս դժվար է իմաստավորել այն, ուստի ինչ-որ պահի «կանգառ» կամ դադար է անհրաժեշտ, խորհելու համար ժամանակ ու պայմաններ են պետք: Կյանքի ու մահվան հարցը առնչվում է մարդու ճակատագրին ու բնության օրենքներին: Բոլոր դեպքերում և բոլոր ժամանակներում մարդ-արարածը կանգնել ու կանգնելու է բնության մեծ առեղծվածի առջև և իր մարդկային զգայարաններով ու բանականությամբ փորձելու է ըմբռնել, ճանաչել ժամանակավորն ու հարատևը, վերջավորն ու անսահմանը: Իսահակյանը կյանքի ու մահվան փոխհարաբերության հարցերը առօրեական, սովորական, ամենօրյա մտածումների ոլորտից նախ տեղափոխում է

²⁶ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 56:

²⁷ Բ. Գ. Գիշյան, Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների համեմատության փորձ, էջ 103:

²⁸ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 327:

²⁹ Այս կապակցությամբ տե՛ս Բ. Գ. Գիշյան, Մահվան արևելյան և արևմտյան արժեքային կողմնորոշումների համեմատության փորձ, էջ 108:

³⁰ Լ. Ն. Տոլստոյ, Վիպակներ և պատմվածքներ, Եր., 1986, էջ 124:

գեղարվեստական մտածելակերպի ոլորտ, իսկ վերջինից էլ՝ դեպի փիլիսոփայական մտորումների ոլորտ: Փիլիսոփայությունը քննարկում է «հավերժական հարցեր», քանի որ ամեն անգամ հարկ է լինում իմաստավորելու անցյալի փորձը, այդ թվում՝ կյանքի ու մահվան վերաբերյալ եղած պատկերացումները: Այս առումով Իսահակյանի մտորումները կյանքի ու մահվան վերաբերյալ տեղավորվում են փիլիսոփայական հավերժական հարցերի շրջանակներում:

Իսահակյանը առանձնակի ուշադրություն է դարձրել հոգեբանական այն երևույթի վրա, թե իր մահը գիտակցող մահկանացու արարածը՝ մարդը, ինչպե՞ս ամեն վայրկյան մահվան մասին չի մտածում կամ ինչպե՞ս է մոռացության տալիս այն: Բնական է, որ այդ մասին ամեն վայրկյան հիշելը, մտածելն ու մտատանջվելը կաթվածահար կդարձնեին թե՛ առանձին անհատներին, թե՛ հասարակությանը: Նման պարագայում ապրելու ուժի գաղտնիքը համարում է այն, որ մարդը կարծես չի հավատում մահին անգամ խոր ծերության ժամանակ: Մյուս կողմից նկատել է, որ մարդը ինչքան քիչ է մտածում ժամանակի ու մահվան մասին, ապրելու համար այդքան շատ ժամանակ է ունենում. «Մահը մենք մի ակամջի հետևը ձգելով (մոռանալով) է, որ կարող ենք ապրել: Մահի մասին չխորհելով»³¹: Այս հարցում Իսահակյանի բացատրությունը աղերսներ ունի Տոլստոյի մտածելակերպի հետ. «... որպեսզի մարդ կարողանա ապրել, նրան հարկավոր է կամ չտեսնել անվախճանականը, կամ ունենալ կյանքի իմաստի այնպիսի բացատրություն, որով վախճանականը հավասարվեր անվախճանականին»³²: Իսահակյանը նկատում է, որ մարդու մեջ բնությունը դրել է մի առողջ բնագոյ, միամիտ էզոիզմ՝ հավատալու, թե կա, իհարկե, մահ, որ մարդն իրոք մահկանացու է, բայց դա բոլոր դեպքերում իր անձին չի վերաբերում, այն իր հետ կապ չունի:

Լ.Ն. Տոլստոյը հոգեբանական այս պահը փիլիսոփայական խորությամբ նկարագրել է «Իվան Իլյիչի մահը» պատմվածքում. «Հոգու խորքում Իվան Իլյիչը գիտեր, որ մեռնում է ինքը, բայց ոչ միայն չէր ընտելանում դրան, այլև ուղղակի չէր հասկանում ... այդ բանը: Սիլլոգիզմի այն օրինակը, որ նա յուրացրել էր Քիզելետերի տրամաբանությունից, - Գայուր մարդ է, բոլոր մարդիկ մահկանացու են, ուստի Գայուր մահկանացու է, - ամբողջ կյանքում նրան ճիշտ էր թվացել միայն Գայուսի, բայց բնավ ոչ իր վերաբերյալ: Նա Գայուս-մարդն էր, ընդհանրապես մարդը, և այդ միտքը նրա առնչությամբ ճիշտ էր միանգամայն, բայց ինքը Գայուր չէր և ոչ էլ ընդհանրապես մարդ, այլ միշտ էլ եղել էր մյուս մարդկանցից բոլորովին, բոլորովին տարբեր արարած»³³:

Թեև կա մահը, որի մասին դարեր շարունակ տարբեր սերունդներ և՛ խորհրդածել են, և՛ վերլուծել, և՛ համակերպվել, և՛ չեն համակերպվել, բայց Իսահակյանի ընկալմամբ իրեն մարդկային ցանկությունների գագաթնակետ՝ «սիրտը գոմե տիեզերքի մեջ հավերժ տրոփեր...» կամ առավելագույնը՝

Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել
Եվ լինել աստված տիեզերաշեն,
Ամենակարող, ամենահզոր
Եվ ամենագետ:

Г. Г. КАДЖОЯН - Проблема жизни и смерти в творчестве Ав. Исаакяна. - Вопросы взаимоотношения жизни и смерти всегда были в центре внимания всего творчества Исаакяна - поэта и мыслителя. Смертность человека является предметом его поэтических и философских раздумий. Тема жизни и смерти занимает особое место в творчестве Исаакяна, и именно поэтому в литературе 1950-х годов его односторонне считали певцом смерти, поэтом скорби.

Однако эту проблему Исаакян рассматривал с философской точки зрения, придавая ей научно-познавательное значение.

Осознавая неизбежность своей смерти, поэт видит противостоящую ей тайную силу в духовной сфере человеческой жизни.

³¹ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 483:

³² Լ. Ն. Տոլստոյ, Խոստովանություն, էջ 87:

³³ Լ. Ն. Տոլստոյ, Վիպակներ և պատմվածքներ, էջ 157: